# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N << ՀՀ ԳՆ ԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-14/1-12>>

ք. Երևան <<18>> մարտի 2014 թ.

<<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ, ի դեմս տնօրեն Գ. Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գլխ. տնօրեն Մ. Խաչատրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ու փորձաքննության անցկացման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2)ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3)ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենա-սարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է

3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի համապատասխան համաձայնագիր:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է գնումը կատարելու համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չնախատեսվելու դեպքում, սույն պայմանագիրը լուծվում է:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանված է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N 186-Ա հրամանով:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԳՆ <<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ | «Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ |
| ՀՀ ԿԲ գանձապետական բաժանմունք | ք. Երևան, Մոսկովյան 33ա |
| Հ/Հ 900004542025 | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02554856 | Հ/Հ 1150000687970100 |
| Տնօրեն՝ | ՀՎՀՀ 02507441 |
| | Գլխ. տնօրեն՝ |
| Գ. Խաչատրյան ____ (ստորագրություն) | Մ. Խաչատրյան ____ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*<<18>> մարտի 2014 թ. կնքված N ՀՀ ԳՆ ԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-14/1-12*
*ծածկագրով գնման պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<table>
<tr><td colspan="2">Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր</td></tr>
<tr><td>Չափաբաժինների համարները</td><td>Չափաբաժնի անվանումը (իրավիճակի նկարագրությունը)</td></tr>
<tr><td>12</td><td>ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում Հովվաջուր գետի հունի մաքրման և ափերի ամրացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում (Դիլիջան քաղաքի ավտոկայարանին հարակից տարածքում Հովվաջուր գետի 150-170 մ երկարությամբ հատվածը խիստ վթարային վիճակում է, ափապաշտպան հենապատերը թեքվել կամ թափվել են հունի մեջ, խոչընդոտելով գետի ջրի բնականոն հոսքին)</td></tr>
<tr><td colspan="2">1. Կատարողը կազմում և պատվիրատուին է ներկայացնում փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը, այդ թվում՝<br>ա) գծագրերը՝ 5 օրինակից,<br>բ) տեխնիկական մասնագիրը՝ 5 օրինակից,<br>գ) աշխատանքի ծավալների ամփոփագիրը՝ 5 օրինակից,<br>դ) նախահաշիվը (հաշվարկված 1984 թվականի գներով և շուկայական գներով)՝ 2 օրինակից:<br>2. Նախահաշիվը կազմվում է պատվիրատուի համար՝ որպես տեղեկատվություն օբյեկտի շինարարության (վերանորոգման) արժեքի վերաբերյալ:<br>3. Նախահաշվում պետք է հաշվի առնվի ԱԱՀ՝ 20 %:<br>4. Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրատուին են ներկայացվում նաև էլեկտրոնային տարբերակով:</td></tr>
<tr><td colspan="2">Աշխատանքի կատարման ժամկետը</td></tr>
<tr><td>սկիզբը</td><td>ավարտը</td></tr>
<tr><td>Գնումը կատարելու համար ֆինանսական միջոցները նախատեսվելու դեպքում համապատասխան համաձայնագիրը կնքելու օրվանից</td><td>Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտը՝ համաձայնագիրը կնքելու օրվանից հաշված 45 օր,</td></tr>
</table>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԳՆ <<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ
ՀՀ ԿԲ գանձապետական բաժանմունք
Հ/Հ 900011542025
ՀՎՀՀ 02554856
Տնօրեն՝
Գ. Խաչատրյան ________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 33ա
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000687970100
ՀՎՀՀ 02507441
Գլխ. տնօրեն՝
Մ. Խաչատրյան ________
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 2*
*<<18>> մարտի 2014 թ. կնքված N ՀՀ ԳՆ ԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-14/1-12*
*ծածկագրով գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին ըստ ամիսների՝ **ընդ որում** **Ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ու փորձաքննության անցկացման աշխատանքներ | | | | - | - | - | - | - | - | - | - | - | - |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԳՆ <<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ
ՀՀ ԿԲ գանձապետական բաժանմունք
Հ/Հ 900011542025
ՀՎՀՀ 02554856
Տնօրեն՝
Գ. Խաչատրյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 33ա
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000687970100
ՀՎՀՀ 02507441
Գլխ. տնօրեն՝
Մ. Խաչատրյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*<<___>> մարտի 2014 թ. կնքված N ՀՀ ԳՆ ԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-14/1-12*
*ծածկագրով գնման պայմանագրի*

| Կատարող | Պատվիրատու |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ___________________ | ___________________ |
| գտնվելու վայրը ___________ | գտնվելու վայրը ___________ |
| հհ ___________________ | հհ___________________ |
| ___________________ | ___________________ |
| հվհհ ___________________ | հվհհ___________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝
____________________________________________________________
____________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________
և Կատարողը՝ ի դեմս____________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ___________________ | ___________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________ | ___________________ |
| Ազգանուն, Անուն | Ազգանուն, Անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

18.03.2014թ. կնքված N ՀՀ ԳՆ ԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-14/1-12 պայմանագրի

ք. Երևան «11» «04» 2014 թ.

ՀՀ ԳՆ <<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ն, ի դեմս տնօրեն Գ. Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության Գլխ. տնօրեն Մ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 19-ի N 297-Ն որոշումը և 18.03.2014 թվականին կնքված N ՀՀ ԳՆ ԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-14/1-12 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 և 2 հավելվածները խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն համաձայնագրի N 1 և 2 հավելվածների:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքների վճարման կարգը և նրանց կատարման վերջնաժամկետը սահմանված են սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (հավելված N 1) և Վճարման ժամանակացույցով (հավելված N 2):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 3 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԳՆ <<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ | «Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ |
| ՀՀ ԿԲ գանձապետական բաժանմունք | ք. Երևան, Մոսկովյան 33ա |
| Հ/Հ 900011542025 | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02554856 | Հ/Հ 1150000687970100 |
| Տնօրեն | ՀՎՀՀ 02507441 |
| | Գլխ. տնօրեն |
| Գ. Խաչատրյան ____________ (ստորագրություն) | Մ. Խաչատրյան ____________ (ստորագրություն) |

*Հավելված 1*
*<<11>> ապրիլի 2014 թ. կնքված N 1*
*Համաձայնագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր | |
|---|---|
| ***Չափաբաժինների համարները*** | ***Չափաբաժնի անվանումը (իրավիճակի նկարագրությունը)*** |
| 12 | ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում Հովվաջուր գետի հունի մաքրման և ափերի ամրացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում (Դիլիջան քաղաքի ավտոկայարանին հարակից տարածքում Հովվաջուր գետի 150-170 մ երկարությամբ հատվածը խիստ վթարային վիճակում է, ափապաշտպան հենապատերը թեքվել կամ թափվել են հունի մեջ, խոչընդոտելով գետի ջրի բնականոն հոսքին) |

1. Կատարողը կազմում և պատվիրատուին է ներկայացնում փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը, այդ թվում՝
   ա) գծագրերը՝ 5 օրինակից,
   բ) տեխնիկական մասնագիրը՝ 5 օրինակից,
   գ) աշխատանքի ծավալների ամփոփագիրը՝ 5 օրինակից,
   դ) նախահաշիվը (հաշվարկված 1984 թվականի գներով և շուկայական գներով)՝ 2 օրինակից:
2. Նախահաշիվը կազմվում է պատվիրատուի համար՝ որպես տեղեկատվություն օբյեկտի շինարարության (վերանորոգման) արժեքի վերաբերյալ:
3. Նախահաշվում պետք է հաշվի առնվի ԱԱՀ՝ 20 %:
4. Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրատուին են ներկայացվում նաև էլեկտրոնային տարբերակով:

| Աշխատանքի կատարման ժամկետը | |
|---|---|
| <u>սկիզբը</u> | <u>ավարտը</u> |
| Համաձայնագիրը կնքելու օրը | Համաձայնագիրը կնքելու օրվանից հաշված 45-րդ օրը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԳՆ <<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ
ՀՀ ԿԲ գանձապետական բաժանմունք
Հ/Հ 900011542025
ՀՎՀՀ 02554856
Տնօրեն
Գ. Խաչատրյան—————————
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 33ա
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000687970100
ՀՎՀՀ 02507441
Գլխ. տնօրեն
Մ. Խաչատրյան—————————
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 2*
*<<__//__>> ապրիլի 2014 թ. կնքված N 1*
*Համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Իրականացվող ծրագիրը՝ 01. Պահուստային ֆոնդ
Բաժին 11. խումբ 01. դաս 01.

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին ըստ ամիսների՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամ ենը Տարի |
| 1. | նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ու փորձաքննության անցկացման աշխատանքներ | | | | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 | 3 600 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԳՆ <<Գյուղատնտեսական ծրագրերի
իրականացման գրասենյակ>> ՊՀ
ՀՀ ԿԲ գանձապետական բաժանմունք
Հ/Հ 900011542025
ՀՎՀՀ 02554856
Տնօրեն՝

Գ. Խաչատրյան------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հայհիդրոէներգանախագիծ» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 33ա
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000687970100
ՀՎՀՀ 02507441
Գլխ. տնօրեն՝

Մ. Խաչատրյան------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.